

ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ

ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ Ռ.Ա.

Երևանի Մ. Զերացու անվ. պետական բժշկական համալսարանի առողջապահության կառավարման
հետբուհական գիտակրթական կուրս, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 12/10/2013 թ., ընդունված է՝ 15/02/2014 թ.

Հետազոտության նպատակն է՝ միջազգային «QUALIN» հարցաթերթի միջոցով տալ մինչև երեք տարեկան երեխաների կյանքի որակի գնահատականը: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել Երևան քաղաքում բնակվող առողջապահության առաջնային օղակում հավաքագրված մինչև 3 տարեկան երեխաներ: Կյանքի որակի գնահատման համար որպես գործիք կիրառվել է «QUALIN» հարցաթերթը, որ լրացրել է երեխայի ծնողներից մեկը և այն մանկաբույժը, որի մոտ երեխան գտնվում է հսկողության տակ: Երեխաների մեծ մասի մոտ (83, 2%), ըստ մանկան զարգացման, քարտում առկա նյարդաբանի եզրակացության, նյարդա-հոգեկան զարգացումը համապատասխանում է իր տարիքային նորմերին, սակայն 16,8% երեխաների մոտ՝ նյարդահոգեկան զարգացումը հետ է մնացել տարիքային նորմայից: Կյանքի որակի ընդհանուր բալը՝ մինչև 3 տարեկան երեխաների համար, ստացվել է միջինի սահմաններում: Այն ըստ ծնողների գնահատման կազմել է 3,9, իսկ ըստ մանկաբույժների՝ 3,4 բալ: Բոլոր ռեսպոնդենտներն ավելի բարձր գնահատել են Կյանքի որակի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ «Վարք և շփում»-ը, «Ընտանեկան միջավայր»-ը: Առավել ցածր նշանակություն են ունեցել «Մենակ մնալու ունակություն» պարամետրը, որը հավանաբար պայմանավորված է այդ տարիքային խմբի երեխաների տարիքային առանձնահատկություններով: Ինչ վերաբերում է ծնողների և մանկաբույժների պատասխանների համապատասխանությանը, ապա նրանք զրեթե նույն ձևով են գնահատել երեխաների կյանքի որակը, բացառությամբ «Վարք և շփում», «Մենակ մնալու ունակություն» պարամետրերի: Բալերի տարբերությունը եղել է վիճակագրորեն հավաստի:

Կյանքի որակի ինչպես ընդհանուր բալը, այնպես էլ «Վարք և շփում» և «Ընտանեկան միջավայր» պարամետրերն ինչպես բժիշկները, այնպես էլ ծնողները բարձր են գնահատել տղաների շրջանում: Սակայն բժիշկները ցածր են գնահատել Կյանքի որակի «Մենակ մնալու ունակություն» ու «Նյարդահոգեկան զարգացում և ֆիզիկական առողջություն» պարամետրերը:

Առողջական առաջին խումբ ունեցող երեխաների հետ համեմատած, առողջական 2-րդ 3-րդ խումբ ունեցող երեխաների կյանքի որակը գնահատվել է ավելի ցածր: Հետազոտվող ընտանիքում ուսումնասիրվել են ռախիտը, անեմիան և պերինատալ շրջանում առաջացող առանձին վիճակները: Համեմատվել է մաշկի և ենթամաշկային բջջանքի հիվանդություններ ունեցող մինչև 3 տարեկան երեխաների Կյանքի որակը՝ առողջ երեխաների Կյանքի որակի հետ: Ակնհայտ է, որ պաթոլոգիա ունեցողների Կյանքի որակը ցածր է առողջ երեխաների Կյանքի որակի հետ համեմատած:

Այսպիսով, «QUALIN» հարցաթերթը կարելի է օգտագործել առողջապահության առաջնային օղակում՝ մինչև 3 տարեկան երեխաների կյանքի որակը գնահատելու համար, ինչպես նաև՝ տարբեր նոզոլոգիաներով դիսպանսեր հսկողության տակ գնտվողների Կյանքի որակը գնահատելու համար: